ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<30>> մարտի 2015 թվականի N 42-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 466-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարի աշխատակազմի Գյումրի-1 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնին կից սոցիալական աջակցության խորհրդի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի հունիսի 27-ի թիվ 320 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 466-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2015 թվականի
Մարտի 30 -ի N 42 -Ա որոշման

<< Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2009 թվականի
դեկտեմբերի 15-ի N 466-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՄՐԻ-1 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻՆ ԿԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Պետրոսյան Աննա - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ.

Իսրայելյան Լաուրա - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ /համաձայնությամբ/.

Սարգսյան Հռիփսիմե - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Գյումրու սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ.

Էմմիյան Տիգրան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության ապահովման բաժնի պետ.

Խաչատրյան Ալլա - <<Արաքս Կենտրոն>> բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ /համաձայնությամբ/.

Մկրտչյան Սվետլանա - <<Ֆլորա>> հասարակական կազմակերպության նախագահ /համաձայնությամբ/:>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝